ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1950 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ

1950 թ. հունվարի 6-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովը, նվիրված Ն. Յա. Մառի ծննդյան 85-ամյակին և մահվան 15-ամյակին։

Ներածական խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը։

Ընդհանուր ժողովը լսեց հետևյալ զեկուցումները.

«Ն. Յա. Մառը և սովետական լեզվաբանությունը» (զեկուցող Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյան), «Ն. Յա. Մառը որպես հնագետ-պատմաբան» (զեկ. պատմ. գիտ. թեկնածու Բ. Ն. Առաքելյան), «Ն. Յա. Մառը և հայկական բանահյուսության ուսումնասիրության հարցերը» (զեկ. ֆիլոլոգ. գիտ. թեկնածու Ա. Տ. Ղանալանյան։

* * *

Հունվարի 9-11-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Ն. Մառի անվան Լեզվի Ինստիտուտի գիտական սեսիան՝ նվիրված Ն. Յա. Մառի ծննդյան 85-ամյակին և մահվան 15ամյակին։ Լսվեցին հետևյալ զեկուցումները. «Ն. Մառը սովետական հայագիտության հիմնադիր» (զեկ. Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյան), Ն. Մառի պայքարը հնդեվրոպաբանության դեմ» (զեկ. ֆիլոլոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սևակ), «Ն. Մառի ուսմունքը կովկասյան ժողովուրդների եզրայրության և լեզուների միասնական կապի մասին» (զեկ. ֆիլոլոգ. գիտ. դոկտոր Ա. Մուրվալյան), «Ն. Մառը հայ ռուսական կուլտուրայի և լեզվի ընդհանրությունների մասին» (զեկ. ֆիլ. գիտ. թեկնածու Ս. Ղազարյան), «Մառի ուսմունքը լեզվական էլեմենտների մասին» (զեկ. ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Մովսեսյան), «Բառիմաստի զարգացումն ըստ Ն. Մառի լեզվի նոր ուսմունքի» (զեկ. ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյան), «Շարահյուսության հարցերը Ն. Մառի ստագիականության ուսմունքի լույսի տակ» (զեկ. ֆիլ. գիտ. թեկնածու Գ. Ջահուկյան)։